

վաստակը իրեն հարկաւորութեանը կամ գուարձութեանը բանեցընէ, ոչ կը հարըստնայ և ոչ կաղքըտնայ: (Ժ) Է որ ըրած վաստակին մէկ կտորը դրամագլխին վրայ զարնէ, կը հարըստնայ, և օրէ օր վաճառականութիւնը կամարհետը ծաղկեցընելով ալ իր խելքն ու գործունէութիւնը աւելի յայտնի կընէ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վէշ — աղէկ դաստիարակութիւն առած որոյ մէկէ օրինակ:

ԻՏԱԼԻԱՅԻ քաղաքներէն մէկուն մէջ բաւական հարստութիւն ունեցող մարդ մը կար մօտ տարիներս, որ իր մէկ հատիկ տղան յանձներ էր աղքատ կնկան մը որ հոգայ ու մեծցընէ: Տղուն ծնողքը առանց նայելու որ բարեկիրթ ու առաքինի ըլլայ ան կինը, հապա միայն թէ աժան ու քիչ ստակով ըլլայ, բարկասիրտ ու ախտաւոր դաստիարակի մը հանդիպեցան, որ միայն իր շահուն համար կը ծառայէր՝ չէ թէ տղան աղէկ մեծցընելու ու կրթելու համար: Նոռ ղացը առջև ասիկայ տղուն վրայ ամէն կերպով խնամք ու գութ կը ցուցընէր, ու իբր թէ անոր աղէկութիւնը կուզէր. իսկ մինակ եղած ժամանակ կը բոլորովին անոր ներհակ. երբեմն կը վախցընէր տղան, երբեմն կը բարկացընէր, երբեմն ալ չափէ դուրս կը շոյէր՝ կը փայփայէր: (Ժ) Է որ մայրը լսէր տղուն լալը, կը բարկանար դաստիարակին. ան ալ նեղանալով աւելի անհոգութեամբ կընայէր տղուն, ու կը թողուր որ ուզածը ընէ. երբեմն մօրմէն անուշեղէն կուզէր տղուն համար, որպէս զի ցուցընէ թէ տղուն վրայ աղէկ հոգ կը տանի. ասանկով տղան սկսաւ ըլլալ փափկասէր, անհամբեր ու բարկասիրտ: Երբոր տղան կաթէ կտրեցին, սկսան փափուկ

բաներով կերակրել զինքը. նայեցան որ հասարակ կերակուրներու ալ վարժեցընեն. անոր համար վեց եօթը տարեկան եղած ատենը երբոր ուրիշ կերակուրներ կուզէին տալ՝ անիկայ վարժած չըլլալով չէր ուտէր, ուրիշ համով կերակուրներ կուզէր. ծնողքն ալ տեսնելով որ ճար չկայ՝ ուզած բաները կուտային:

Ենթացածին պէս կերթար մօրմէն ուտելու բան կուզէր. ան ալ զինքը չլացընեմ լսելով՝ ուզածը կուտար. ետքը սեղանի վրայ ալ թէ որ քիչ մը ախորժակ՝ չունենար՝ կը ստիպէին որ ուտէ: Այլ երջապէս այնպէս անկարգ կերպով մեծցուցին տղան որ եղաւ շատակեր, կամապաշտ ու տկար մարմնով: Երբոր օրուան մէջ բանը գործը ուրիշ բան չէր, բայց եթէ ուտել, խմել, խաղալ ու չարութիւններ գէշ ընկերներէ չէին զգուշացընէր լսելով թէ դեռ պղտիկ է, ինչ չար օրինակ պիտի առնէ անոնցմէ. ուսմունք ալ չէին սորվեցընէր՝ դեռ տղայ է, խելքը բացուած չէ լսելով. որով եղաւ ծոյլ, աշխատանքէ փախչող ու բթամիտ: Հոգեւոր բաներու մէջ տղան կրթելու ալ ամենեւին հոգ չըրին, ոչ հարկաւորաղութները և ոչ քրիստոնէի մը առաջին գլխաւոր պարտքերը սորվեցուցին. հապա միայն թէ երեսը խաչակնքել ժամ երթալ և ուրիշ մէկ քանի մանր մունր բաներ: Ենթ որ համար երբոր տղուն խելքը բացուեցաւ, առաքինութեան անունը միայն գիտէր, իսկ իր գործքերուն կանոն՝ խելքին փլած բանն էր. աղօթքէ կը փախէր, իսկ աշխատանքին և ուսմունքին անունն ալ չէր ուզէր լսել: Եւ բաներս տեսնելով ծնողքը սկսան տագնապիլ, աղաչել, յորդորել, սաստել, ամէն հոգ ընել որ իրենց տղան բան սորվի, մարդ ըլլայ. բայց ինչ չա՛հ. բանը բանէն անցեր էր, ու ամէն մոլութիւն իրեն սովորութիւն ու բնութիւն դարձեր

էր : Վոնէ անկէ ետքը պէտք եղած ճամբան բռնէին . չէ . հապա սկսան ծեծել , յանդիմանել , պատիժներ սպառնալ . ասով ալ աւելի զայրացուցին տղան , ու ախտերը կատղեցուցին , փոխանակ զի պէտք էր անուշու-թեամբ խրատել : Վախը մարդկանց ամօթը առջևը դնել : Արբոր տեսան թէ այսպէսով ալ գլուխ չեն կրնար ելլել , դպրոց խաւրեցին , հոն ալ գընաց՝ կարծես թէ չգիտցած չարու-թիւները ընկերներէն սորվելու հա-մար , որով ալ աւելի գէշցաւ . անկէ ալ հանեցին արհեստաւորի մը քով դրին . հոն ալ ոչ միայն անպիտանա-ցաւ , այլ նաև աղէկուծի մըն ալ ունէր նէ՝ ան ալ կորսնցուց : Վեւորդ է ըսելը թէ այսպիսի մարդուն վախ-ճանք ինչ եղած է . աս աշխարհքիս մէջ դժբաղդ կեանք անցընելէն վեր-ջը , ուրիշները կրճանձրանան իրմէ , ինքը իրեն ծանրութիւն կըլլայ , մո-լուծեանց մէջ տողորուած կապրի , հոգւով մարմնով ցաւազար ծերու-թիւն մը կունենայ . և Վստուծոյ մեծ ողորմութիւնն է՝ թէ որ անդին ալ հոգւով և մարմնով յաւիտեան թշուառ չըլլայ :

Վանք ասոր ներհակ՝ աղէկ դաս-տիարակութեամբ մեծցած տղու մը վրայ , որով ալ աւելի կիմացուին մէ-կտին պակասութիւնները : Վստուծոն ողորմալ ալ թէպէտ բաւական հա-րուստ էին , բայց մայրը չուզէր ծրծ-մօր յանձնել իր զաւակը , գիտնալով որ բուն մայրական կրթութիւնը շատ աւելի աղէկ է , և թէ իրեն վարձքը մեծ է Վստուծոյ առջև՝ թէ որ ինչ պէս պէտք է նէ մեծցընէ իր տղան . ուստի ամենայն ջանքով հոգ ու խը-նամք կը ցուցնէր տղուն . ոչ անանկ սաստիկ կը սիրէր որ երես ելլէ անի-կայ , և ոչ ալ անանկ պաղ կընայէր որ իրմէ խրտի : Վաթէն կտրելէն վեր-ջը ինչուան երկու իրեք տարի առանց մսեղէնի կերակրեցին զինքը կաթ-նեղէնով ու պտղեղէնով , որոնցմով մարդուս կազմուածքը աւելի առողջ

կըլլայ . իսկ գինի , օղի և ուրիշ տաք-ցընող ըմպելիքներ ամենեւին չէին տար : Վեց եօթը ամսական եղածին պէս սկսան քալելու վարժեցընել , ու երբոր մէկ տարեկան եղաւ՝ սկսան հարկաւոր բաները սորվեցընել . ինչ պէս խաչակնքելը , հայր մերը , և այլն : Արբոր երկու իրեք տարեկան եղաւ , համարձակ խօսելու վարժե-ցուցին . իրեն հոգւոր պատմու-թիւններ կը պատմէին ու նոյնը պատ-մել կուտային . և բաց ՚ի հայրմե-րէն ուրիշ աղօթքներ ալ սորվեցու-ցին , և թէ ինչպէս պատկառանքով պիտի կենայ աղօթքի ատեն . և տը-ղուն ինչ որ կը սորվեցընէին՝ նոյն բա-նը գործով կընէին , որով ըսածնին ա-նոր մտքին մէջ աղէկ մը կը տողո-րուէր : Վրպատուիրէին որ ուրիշի ոխ չպահէ , զուրիշը չնախատէ , ծածուկ բան չառնէ . ու թէ որ վրան տես-նէին ասանկ բան մը՝ շուտով զինքը կը պատժէին . թէ որ ըրածը ուրա-նար՝ աւելի սաստիկ , բայց թէ թո-ղութիւն առնէր՝ պատիժը կը չափա-ւորէին , երբեմն ալ կընէրէին . պա-տիժը առնելէն վերջն ալ կը խաւրէին որ խաչելութեան մը առջև երթայ իր ըրած յանցանքին համար թողու-թիւն խնդրէ . ասով կը վարժէր որ և իցէ ատեն ըրած յանցանացը վրայ զղջալու :

Վմենեւին ձեռք չէին վերցընէր վը-րան , հապա կը յանդիմանէին , կը խրա-տէին , ու պատժելու համար՝ ուղածը չէին տար , ու չուզած բանին կաշխատ-ցընէին : Արբոր առջի անգամ մեծ յան-ցանք մը կընէր , ինչպէս յիշուցք՝ , գո-ղութիւն , կամակորութիւն և այլն , սաստիկ կը պատժէին , որպէս զի վախ-նայ ու մէյմալ չընէ :

Չորս տարեկան որ եղաւ՝ քրիստո-նէական վարդապետութիւն սկսան սորվեցընել տղուն . ամէն օր ալ մէյ-մէկ պզտիկ խրատներ կը խօսէին ի-րեն , որպէս զի Վստուծոյ վախը և

հոգեւորի սէրը մտքին մէջ վառի : Թիւ որ տղան բանի մը համբերէր կամ ուրիշ առաքինութիւն մը ընէր, կը գովէին ու կը վարձատրէին որ աւելի յորդորուի առաքինութեան ետեւէ ըլլալու : Թիւ որ կուզէին որ պակասութենէ մը ետ կենայ, պարգև կը խոստանային . ու ան օրը կամ ան շաբաթը Թիւ որ նոյն պակասութիւնը չընէր՝ պարգևը կուտային . այսպէս շատ պակասութիւնները շտկեցին քիչ ատենի մէջ :

Ուսման կողմանէ ալ տան մէջ կը սորվեցընէին երկու ժամ կարգալ, մէկ ժամ գրել . և շաբաթուն մէջ օր մը հանգիստ կը թողուին որ անմեղութեամբ ուրախանայ ու զուարճանայ : Երբոր եօթը ութը տարեկան եղաւ, սկսան խոստովանութեան ու հաղորդութեան վերաբերեալ բաները սորվեցընել, ու միշտ կը յորդորէին որ ջերմեւանդ ըլլայ՝ Վրիստոսի սուրբ չարչարանացը, և ստէպ պատարագ տեսնելու անհոգ չըլլայ : Արպատուիւրէին որ ամէն իրիկուն քննութիւն ընէ իր մեղքերուն վրայ, ու Թիւ որ մեղք մը ըրեր է՝ զղջայ և առաջագործ մէյմըն ալ չընելու, նոյնպէս առաւօտը անկողինէն ելլելու ատեն՝ նոյն օրուան ընելու գործքերը Վստոլծոյ յանձնէ :

Վհա այսպէսով մեծցուցին ան երջանիկ ծնողքը իրենց սիրական զաւակը, որ մեծնալով եղաւ առաքինի ու կը թեալ մարդ, ամէնուն սիրելի, ծընողացը պարծանք, օտարներուն բարի օրինակ, ներքին ու արտաքին կատարելութիւններով զարդարուած . և չափաւոր հարստութիւնը աղէկ բանեցընելով՝ աւելի հարըստցաւ, աղքատաց ողորմութիւնն ալ քանի գնաց աւելցուց . ծնողացը օրհներ քին հեա՝ ամէն տեսնողէն գովասանք ալ լսեց, ու երջանիկ կեանք մը ունեցաւ :

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հոանջի համար ընելու պատրաստութիւններ
բռն վրայ :

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒՄԸ մը համար գետին մշակելը գիտնալ բաւական չէ . պէտք է գիտնայ նաև Թիւ մշակած երկրին բերքը ինչպէս պիտի ժողվէ : Վս բանիս մէջ պզտի անհոգութիւն մը մեծամեծ վնասներու պատճառ կրնայ ըլլալ, ու աշխատանքը փճացընել : Մենք հոս ընդհանուր կանոնները միայն գնենք ամէն տեսակ բուսոց համար . ետքը զատ զատ կրիօսինք Թիւ ամէն տեսակ բուսոց վրայ ինչ մասնաւոր հոգ ընելու է հնձելու կամ քաղելու ատեն : Վս աշխատանքին իրեք անուն կուտան երկրագործները . մէյմը հոանջ կամ հիջել, որ արմտիքներու համար կըսուի . մէյմը քաղող կամ քաղել, որ պտուղներու համար կըսուի . մէյմըն ալ այգիէն իւր համ ինչ, որ այգիներու քիւ խաղողի համար կը բանեցուի :

Նշմարիտ առած մը կայ որ Թիւ պէտ ամէն բանի կը յարմարի՝ բայց աւելի աս նիւթիս մէջ հարկաւոր է, քիւ Թիւ ան բանն որ այսօր կրնաս ընել վաղուան մի թողուր :

Արպէս զի հունձքը կամ քաղողը յարմար ատենին լմննայ՝ պէտք է նայիլ Թիւ որչափ աշխատաւոր պէտք է . ասոնց Թիւ փորձով միայն կըսորվուի . վասն զի Թիւ որ խիստ շատ աշխատաւոր գործածես, աւելի շփութութիւն կը ըլլայ . իրենց վերակացուն ալ դժուար կը ըլլայ ամէնուն վրայ ուշադրութիւն ընելը . ասկէ կը հետեւի խառնակութիւն, շփութութիւն ու վերի վերոյ գործողութիւն : Իսկ Թիւ որ գործաւորներուն Թիւ խիստ քիչ ըլլայ, գործողութիւնը ետ կը մնայ, և բերքը սաստիկ հասուննալով՝ քանակը կը քիչնայ ու արժէքը կը ցածնայ :

Երբեք ու ծառաներուն շատու-